ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ կարիքների համար բենզին ռեգուլյար /Ապրանք/ ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 07.08.2019 ժամը 16.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Հ. Սարոյանը

Անդամներ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Ռ. Տ. Սահակյանը

Հ. Հարությունյանը

Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Լ. Կաբասակալյանը

Կ. Եսայանը

Հանձնաժողովի քարտուղար՝

Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

1. **Հանձնաժողովը արձանագրեց**

1.1 Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

Ընդունել ի գիտություն, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության /ՀՀՌՑ/ կարիքների համար Ապրանքի ձեռքերման նպատակով 31.07.2019 էլեկտրոնային ARMEPS համակարգով հայտարարվել է ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/24 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /Ընթացակարգ/: Հայտերը բացվել են էլեկտրոնային www.armeps.am կայքի միջոցով՝ ս.թ. օգոստոսի 07-ին, ժամը 16.00-ին:

1.2 Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, տվյալները

N	Մասնակցի անվանումը	էլ. փոստի հասցեն	ՀՎՀՀ
1 /համատեղ գործունեություն՝ կոնսորցիում/	ՍԻՓԻԷՍ ՕԻԼ Քորփորեյշն ՍՊԸ և	tender@cps.am	02614085
	ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՍՊԸ	tendercps@gmail.com	02665864

1.3 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

ՍԻՓԻԷՍ ՕԻԼ Քորփորեյշն և ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՍՊ ընկերության /համատեղ գործունեություն/կոնսորցիում/ կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին/**կցվում է**/:

1.4 Մասնակիցների առաջարկած գինը, նախահաշվային գինը.

ՀՀ դրամ

N	Մասնակցի անվանումը	*1 չափաբաժին /բենզին ռեգուլյար/* Նախահաշվային գին՝ 15 050 000		
		արժեք	ԱԱՀ	գումար
1	ՍԻՓԻԷՍ ՕԻԼ Քորփորեյշն և ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՍՊԸ /համատեղ գործունեություն՝ կոնսորցիում/	11 958 333.33	2 391 666.67	14 350 000

2 Հանձնաժողովը որոշեց.

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 40-րդ կետի 5-րդ ենթակետով ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ և ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՍՊ ընկերության՝ համատեղ գործունեություն կոնսորցումի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և 1 չափաբաժնով

ա) ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ և ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՍՊ ընկերության՝ համատեղ գործունեություն կոնսորցումին ճանաչել **առաջին տեղը** զբաղեցրած մասնակից.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

2.2 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից /Կոմիտե/ կատարել հարցում՝ մասնակցի ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ և ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՍՊ ընկերության՝ համատեղ գործունեություն կոնսորցումի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը /կցվում է/՝ համաձայն 13.05.2019 թիվ 2/2019 Համատեղ գործունեության պայմանագրի:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

2.3 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով և 32-րդ կետի զ/ պարբերությամբ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջել երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 13.08.2019 էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը. ապրանքի տեխնիկական բնութագիրը, առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (ամբողջական նկարագիր), ինչպես նաև հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը. /13.05.2019 թիվ 2/2019 Համատեղ գործունեության պայմանագրով նախատեսված/

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

2.4 Գնահատման նիստը տեղի կունենա Կոմիտեից տեղեկատվություն ստանալուց և որակավորման փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Սարոյան

անդամներ՝ Ռ. Տ. Սահակյան

Հ. Հարությունյան

Լ. Կաբասակալյան

Կ. Եսայան

քարտուղար՝ Մ. Նիկոլյան